# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վանանդ բնակավայր 04.12.2024 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 4-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով Վանանդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչը ներկայացրեց գործունեության բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, հողի որակի հետ կապված:

Միջնակարգ դպրոցի նախագծման աշխատանքներ իրականացնող ներկայացուցիչները ներկայացրեցին Վանանդ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների վերաբերյալ մանրանասն տեղեկատվություն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար: Ներկաների կողմից հարցեր և առաջարկություններ չհնչեցին, ծավալվեց քննարկում կառուցվող դպրոցի շենքի ջերմամեկուսացման վերաբերյալ՝ ինչին պատասխանվեց, որ հաշվի են առնված բոլոր հանգամանքները և ներառված են հաշվետվության մեջ:

Վ. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը: Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** [signature] **Վ.Հարությունյան**

**«Հայնախագիծ» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝** [signature]